



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« »

2018 թ.

N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ԱՐԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սաղաթեյյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-261-9.02.2018-ԱՍ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի մարտի 7-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 235 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ՎԱՀԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

«ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ
(Պ-261-9.02.2018-ԱՍ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է ներկայացված նախագծով քննարկվող գործող օրենքի հոդվածները թողնել անփոփոխ, քանի որ առաջարկվող իրավակարգավորումները չեն բխում «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) տրամաբանությունից, ոլորտում վարվող քաղաքականության սկզբունքներից, նպատակներից և համահունչ չեն միջազգային պրակտիկային: Ստորև ներկայացվում են հիմնավորումները:

1. Նախագծով սահմանված է պետական նպաստների նշանակման կամ մերժման որոշում ընդունելու համար միասնական հնգօրյա ժամկետ: Այս կապակցությամբ հայտնում ենք, որ օրենքով սահմանված են պետական նպաստների 11 տեսակներ, որոնցից՝

1) 10-ի մասով օրենքով արդեն իսկ սահմանված են նպաստ նշանակելու կամ նպաստ նշանակելը մերժելու որոշում կայացնելու ժամկետներ՝ հաշվի առնելով յուրաքանչյուր տեսակի նպաստի նշանակման առանձնահատկությունները՝ անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրումը, իրավունքի իրացման համար անհրաժեշտ տվյալներն այլ պետական մարմինների կողմից վարվող տեղեկատվական բազաներում հաշվառվելու ժամկետները.

2) մեկի՝ ժամանակավոր անաշխատունակության և աշխատող մայրերի մայրության նպաստների տրամադրմանն առնչվող հարաբերությունները կարգավորվում են այլ օրենքով:

Մասնավորապես, ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստների (ընտանեկան նպաստ, սոցիալական նպաստ, հրատապ օգնություն) դեպքում նպաստ նշանակելու պարտադիր պայման է ընտանիքի սոցիալ-տնտեսական պայման-

ների ուսումնասիրության նպատակով տնային այցելություն կատարելը: Հարկ է նշել, որ այս նպաստների նշանակման, մերժման կամ դադարեցման նպատակով տարեկան կատարվում են շուրջ 300000 տնային այցելություններ: Շատ դեպքերում կատարվում են կրկնակի տնային այցելություններ, ինչպես նաև այցելություններ՝ հանձնաժողովով:

Չաշխատող անձի մայրության նպաստը նշանակելիս, անձի աշխատելու կամ չաշխատելու կամ խնամքի նպաստը նշանակելիս ծնողի՝ խնամքի արձակուրդում գտնվելու հանգամանքները պարզելու համար քաղաքացուց որևէ փաստաթուղթ չի պահանջվում: Անհրաժեշտ տեղեկատվությունն ստացվում է «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տեղեկատվական բազայից, որի տվյալները ձևավորվում են գործատուների ներկայացրած գրանցման հայտերի հիման վրա, որոնց ներկայացման ժամկետները սահմանված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Այս առումով պետական նպաստների նշանակման կամ մերժման որոշում ընդունելու համար նախագծով սահմանված միասնական հնգօրյա ժամկետ սահմանելն իրատեսական չէ:

2. Օրենքով կանոնակարգված են նպաստ վճարող կազմակերպության, վճարման կարգի մասին, իսկ նպաստ նշանակելը մերժելու դեպքում՝ նշանակումը մերժելու մասին դիմողին տեղեկացնելուն առնչվող իրավահարաբերությունները:

Այսպես, ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված 3 նպաստները վճարվում են բացառապես «Հայփոտ» ՓԲԸ-ի միջոցով, իսկ նշանակելու կամ մերժելու որոշման մասին դիմողներն իրազեկվում են, համապատասխանաբար, Հայաստանի Հանրապետության նախարարության, մարզպետարանների, քաղաքապետարանի պաշտոնական կայքէջերում, ինչպես նաև համացանցային կայքեր ունեցող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքապետարանների և գյուղապետարանների կայքէջերում յուրաքանչյուր ամիս տեղակայվող ցուցակներից:

Մնացած 7 տեսակի պետական նպաստների դեպքում շահառուն ինքն է ընտրում վճարող կազմակերպությունը (նշում է նպաստ նշանակելու դիմումում), իսկ անկանխիկ եղանակով վճարման դեպքում՝ նաև բանկը, որտեղից նա ցանկանում է ստանալ նպաստը:

Նպաստ նշանակելը մերժելու դեպքում դիմողին 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ծանուցելը ևս նախատեսված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ (տե՛ս օրենքի 23.2-րդ հոդվածի 4-րդ մասը, 25-րդ հոդվածի 4-րդ մասը, 32-րդ հոդվածի 4-րդ մասը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 29-ի N 1566-Ն որոշման N 1 հավելվածի 8-րդ կետը):

Վերը թվարկված պետական նպաստների նշանակման գործընթացում, օրենքի կիրարկումն ապահովող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումներով կարգավորված են այն դեպքերը, երբ նպաստի նշանակման համար առաջին դիմումը մերժվում է, և կրկին դիմում ներկայացնելու անհրաժեշտություն է առաջանում: Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշումներով սահմանված են կրկին դիմում ներկայացնելու ողջամիտ ժամկետները:

3. Նպաստի վճարման ժամկետների մասին շահառուներին տեղեկացնելու վերաբերյալ առաջարկի կապակցությամբ հարկ է նշել, ինչպես նշված է նախագծի հիմնավորման մեջ, անհրաժեշտ տեղեկատվությունը տրամադրվում է բացատրական-քարոզչական միջոցառումներով, ԶԼՄ-ների միջոցով:

Ներկայացված փաստարկներից ելնելով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ օրենքով հստակ սահմանված են չաշխատող անձի մայրության, երեխայի ծննդյան միանվագ նպաստներ ստանալու իրավունքի դադարեցման հիմքերը՝ դրանք օրենքով սահմանված ժամկետում ու կարգով պատշաճ տեղեկացված լինելուն փոխկապակցելու վերաբերյալ նախագծով առաջարկվող մոտեցումն ընդունելի չէ: Բացի դրանից, ներկայացված առաջարկությունը չի բխում իրավական որոշակիության սկզբունքից:

4. Նախագծով առաջարկվում է Հայաստանի Հանրապետության բնակչության վայրի հասցեով հաշվառված լինելը հանել չաշխատող անձի մայրության նպաստի իրավունք տվող պայմաններից: Ընդ որում, ըստ նախագծի հիմնավորման, այս առաջարկի համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ գործող պայմանի ուժով «մայրության նպաստ չեն կարող ստանալ չաշխատող այն կանայք, որոնք մշտապես կամ օրենքով սահմանված որոշակի տևողությամբ փաստացի, սակայն առանց հաշվառման բնակվում են Հայաստանի Հանրապետության որևէ բնակավայրի հասցեում»:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ «Բնակչության պետական ռեգիստրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի համաձայն, Հայաստանի Հանրապետության բնակիչն ունի բնակչության պետական ռեգիստր իր մշտական բնակության վայրի (կացարանի) հասցեն և իր անձնական տվյալները ներկայացնելու պարտավորություն:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 14-ի N 1231-Ն որոշման N 1 հավելվածի 20.1-ին կետով սահմանված է փաստացի բնակության վայրի հասցեով անձանց հաշվառման կարգը, այն է՝ եթե անձը չի կարող ներկայացնել տվյալ տարածքում բնակվելու իր իրավունքը հավաստող փաստաթուղթ, ապա դիմումում նշված հասցեում բնակվելու փաստն ստուգվում է ոստիկանության կողմից: Ընդ որում, այն դեպքերում, երբ նախապես հայտնի է բնակելի տարածության սեփականատիրոջ առարկությունն իր բնակելի տարածության հասցեում դիմումատուին հաշվառելու վերաբերյալ, կամ դիմումատուն բնակվում է (գտնվում է) բնակելի տարածություն չհանդիսացող տարածքում, ապա ռեգիստրում կատարվում է նշում փաստացի բնակվելու (գտնվելու) վայրի մասին:

Ըստ այդմ, օրենքի 23.1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջը շահառուի՝ Հայաստանի Հանրապետության բնակչության վայրի հասցեով հաշվառված լինելու վերաբերյալ, իրավաչափ է: Բացի դրանից, այդ պահանջի առկայությունն ապահովում է

օրենքի մյուս պայմանների ապահովումը (օրինակ, ըստ անհրաժեշտության, գրավոր տեղեկացվելը Հայաստանի Հանրապետության բնակչության վայրի հասցեով):

Ընդ որում, այս պահանջն օտարերկրյա քաղաքացու համար Հայաստանի Հանրապետությունում բնակվելու և համապատասխան օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության քաղաքացու՝ նույնպիսի իրավունքով օժտված լինելու պահանջներով փոխարինելը կստեղծի իրավական խառնաշփոթ, քանի որ անհասկանալի է, թե ինչպե՞ս, ի՞նչ փաստաթղթով պետք է հավաստվի օտարերկրյա քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետությունում բնակված լինելու հանգամանքը կամ ինչպե՞ս ճշտել, թե Հայաստանի Հանրապետության քաղաքացին ի՞նչ հիմքով է գտնվել օտարերկրյա պետությունում և արդյո՞ք այդ հիմքը նրան այդ երկրում տալիս է մայրության նպաստի իրավունք: Հարց է՝ ինչպե՞ս պետք է իրացնել օտարերկրացու իրավունքը Հայաստանի Հանրապետությունում, եթե այդ երկրում սահմանված չէ չաշխատող անձի մայրության նպաստի ինստիտուտը: Ընդ որում, հարկ է նկատի ունենալ, որ նման հարաբերությունները (որևէ իրավունքի փոխադարձ ճանաչումը) պետությունների միջև կարգավորվում են միջպետական պայմանագրերով:

Հարկ է նկատի ունենալ, որ Հայաստանի Հանրապետությունը պետական նպաստների բնագավառին վերաբերող կնքել է միայն ԱՊՀ շրջանակներում «Երեխաներ ունեցող ընտանիքներին սոցիալական նպաստների, փոխհատուցումային վճարումների և ալիմենտների վճարման բնագավառում քաղաքացիների երաշխիքների մասին» համաձայնագիրը, որի 3-րդ հոդվածի համաձայն երեխաներ ունեցող քաղաքացիներին երաշխավորված պետական սոցիալական օգնությունը տրամադրվում է այն կողմի ազգային օրենսդրությամբ սահմանված կարգով, որի տարածքում բնակվում է երեխան՝ ծնողներից մեկի հետ (նրան փոխարինող անձի հետ):

5. Մայրության նպաստի իրավունքն իրացնելու համար հիմք ընդունվող փաստաթղթերի կազմից ժամանակավոր անաշխատունակության թերթիկը և Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ծննդօգնության պետական հավաստագիրը հանելու առաջարկությունը ևս ընդունելի չէ:

Ժամանակավոր անաշխատունակության թերթիկ ներկայացնելը պարտադիր պահանջ է և՛ աշխատող, և՛ չաշխատող մայրերին մայրության նպաստ նշանակելու համար, քանի որ սա այն փաստաթուղթն է, որով, ըստ էության, ամրագրվում է կնոջ՝ մայրությամբ պայմանավորված աշխատունակության կորստի (հղիության և ծննդաբերության արձակուրդի) ժամանակահատվածը՝ 140 օր (70 օր՝ հղիության, 70 օր՝ ծննդաբերության): Ընդ որում, այս փաստաթուղթը հենց վաղաժամ ծննդաբերելը հավաստող փաստաթուղթն է, քանի որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հուլիսի 14-ի N 1024-Ն որոշմամբ հաստատված՝ ժամանակավոր անաշխատունակության թերթիկի լրացման ու տրամադրման կարգի 36-րդ կետով սահմանվում է վաղաժամ (հղիության 154-րդ օրը և 154 օրվանից հետո) ծննդաբերելու դեպքում անաշխատունակության թերթիկ տալու կարգը (տրվում է միայն ծննդաբերության արձակուրդի ժամանակաշրջանի համար):

Եթե չաշխատող անձին մայրության նպաստ նշանակելիս ժամանակավոր անաշխատունակության թերթիկի փոխարեն հիմք ընդունվի երեխայի ծննդյան վկայականը, ապա այսպիսով ծնողը կգրկվի մինչև երեխայի ծնվելը պետական աջակցություն ստանալուց, մինչև խնդրո առարկա նպաստի տրամադրումը նպատակ է հետապնդում աջակցել հղի կնոջը նաև նախածննդյան ժամակահատվածում: Մյուս կողմից, աշխատող և չաշխատող մայրերի համար նախագծով սահմանվում են անհավասար պայմաններ, քանի որ ստացում է՝ աշխատող կինը մայրության նպաստը կարող է ստանալ հղիության 210-րդ օրվանից, իսկ չաշխատողը՝ 280-րդ օրվանից՝ երեխայի ծնվելուց հետո:

Միայն երեխայի ծննդյան վկայականի հիման վրա մայրության նպաստ նշանակելու առաջարկն ընդունելի չէ նաև փոխնակ մոր դեպքում, քանի որ երեխայի ծննդյան վկայականում նշվում են միայն կենսաբանական մոր տվյալները: Մինչդեռ

օրենքի 23.2-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված է, որ չաշխատող փոխնակ (սուրոգատ) մորը մայրության նպաստ վճարվում է ընդհանուր հիմունքներով: Փոխնակ մորից ծնված երեխայի չաշխատող կենսաբանական մորը մայրության նպաստ չի վճարվում:

Ծննդօգնության պետական հավաստագիրը չաշխատող անձին մայրության նպաստ նշանակելու համար հիմք չընդունելու առաջակությանը չի բխում վարվող քաղաքականության տրամաբանությունից: Ըստ էության, օրենքով սահմանված պահանջով ամբողջացվում է ծննդօգնության բնագավառում ցուցաբերվող պետական աջակցությունը:

6. Օրենքի տրամաբանությունից չի բխում նաև խնամքի նպաստ վճարելը՝ անկախ երեխայի և (կամ) ծնողի՝ Հայաստանի Հանրապետությունից անընդմեջ վեց ամիս և ավելի ժամկետով բացակայելու հանգամանքից: Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն խնամքի նպաստը նշանակվում է դիմումը խնամքի արձակուրդում գտնվելու ընթացքում ներկայացվելու դեպքում՝ խնամքի արձակուրդն սկսելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից, եթե շահառուն դիմել է խնամքի արձակուրդն սկսելու ամսվան հաջորդող վեց ամսվա ընթացքում, իսկ այդ ժամկետից հետո դիմելու դեպքում՝ դիմելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

Այս դեպքում առաջարկության ընդունմամբ ստեղծվում է մի իրավիճակ, երբ անձը կարող է դիմել, օրինակ, խնամքի արձակուրդում գտնվելու առաջին ամսում, երբ իրեն կնշանակվի խնամքի նպաստ, 10 ամիս բացակայել Հայաստանի Հանրապետությունից և վերադառնալով՝ ստանալ խնամքի նպաստի նախորդ 11 ամիսների գումարը: Իսկ եթե անձը խնամքի արձակուրդի առաջին ամսում բացակայում է Հայաստանի Հանրապետությունից և կարողանում է վերադառնալ միայն 11-րդ ամսում, ապա նա զրկվում է խնամքի նպաստի նախորդ 11 ամիսների գումարից:

Բացի դրանից, խնամքի նպաստի իրավունքի իրացման 6-ամսյա ժամկետը ամբողջացնելու նպատակով օրենքի 28-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերով սահմանված է

խնամքի նպաստը նաև ծնողի տված և նոտարի վավերացրած լիազորագրով վեց ամսվանից ոչ ավելի ժամանակահատվածում վճարելու հնարավորություն:

7. Նպաստ նշանակելը մերժելու որոշումը վարչական և դատական կարգով բողոքարկելու վերաբերյալ նախագծով ներկայացված առաջարկության դեպքում հարկ է նկատի ունենալ, որ խնդրո առարկան կարգավորված է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, մասնավորապես, օրենքի 4-րդ բաժնով:

8. Հարկ ենք համարում նշել նաև, որ նախագծի 2-րդ, 5-րդ և 9-րդ հոդվածների ընդունումը (առանց Հայաստանի Հանրապետության բնակության վայրի հասցեով հաշվառված լինելու փաստի, չաշխատող անձին, այդ թվում՝ նաև օտարերկրյա քաղաքացուն մայրության նպաստ ստանալու իրավունք տալու մասով, երեխայի և (կամ) ծնողի՝ Հայաստանի Հանրապետությունից անընդմեջ վեց ամիս և ավելի ժամկետով բացակայելու դեպքում երեխայի խնամքի նպաստի վճարումը չդադարեցնելու մասով) ենթադրում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից լրացուցիչ ֆինանսական միջոցների հատկացման անհրաժեշտություն, որի չափը որոշել հնարավոր չէ՝ համապատասխան տեղեկատվության բացակայությամբ պայմանավորված:

Այդուհանդերձ, նախագծի տեքստի վերաբերյալ հայտնում ենք, որ՝

1) 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, եթե նպաստի նշանակումը մերժվում է դիմումում և (կամ) կից փաստաթղթերում առկա թերությունների պատճառով, ապա դիմողին տրվում է նպաստի գործում առկա թերությունները վերացնելու և այն կրկին ներկայացնելու համարողջամիտ ժամկետ, որի տևողությունը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Մինչդեռ, փաստաթղթերում թերությունների առկայությունը՝ որպես նպաստի նշանակման մերժման հիմք, օրենքի 7-րդ հոդվածում նախատեսված չէ,

2) 7-րդ հոդվածով նախատեսվող լրացման արդյունքում օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասում ստացվում է իմաստային անհամապատասխանություն,

3) 10-րդ հոդվածով նախատեսվում է ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 8-ի N 1179-Ն որոշումը, մինչդեռ Հայաստանի Հանրապետության կառավարության նշված որոշումը կարող է ուժը կորցրած ճանաչվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ,

4) հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված իրավական տեխնիկայի կանոնները՝ նախագծի 4-րդ, 6-րդ, 8-րդ հոդվածներում «հետևյալ բովանդակությամբ» բառերն անհրաժեշտ է փոխարինել «հետևյալ խմբագրությամբ» բառերով, 5-րդ և 7-րդ հոդվածներում՝ «ավելացնել» բառը՝ «լրացնել» բառով, իսկ 11-րդ հոդվածից անհրաժեշտ է հանել «օրվա» բառը:

Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկումն ապահովելու համար, եռամսյա ժամկետում համապատասխան փոփոխություններ կկատարվեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 275-Ն, 2015 թվականի հոկտեմբերի 8-ի N 1179-Ն, 2015 թվականի դեկտեմբերի 29-ի N 1566-Ն, 2011 թվականի հուլիսի 14-ի N 1024-Ն որոշումներում:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 մարտի 2018 թվականի N 235 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արտեմ Ասատրյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-261-9.02.2018-ԱՍ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

2018 թ. մարտի 7
Երևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. 2013 թվականի դեկտեմբերի 12-ին ընդունված «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 6. Պետական նպաստի տրամադրումը

1. Պետական նպաստ ստանալու համար քաղաքացին դիմում է իր բնակության վայրի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական նպաստ տրամադրող մարմնին (այսուհետ՝ տարածքային կենտրոն):

2. Դիմողը տարածքային կենտրոնում հայտարարագրում է պետական նպաստի տվյալ տեսակի համար անհրաժեշտ տվյալները եւ ներկայացնում պահանջվող փաստաթղթերը:

3. Պետական նպաստը, սույն օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում, տրամադրում (նշանակում եւ դրա վճարումը կազմակերպում) է տարածքային կենտրոնը:

4. Տարածքային կենտրոնը, քաղաքացու դիմումը եւ կից փաստաթղթերն ստանալու պահից հնգօրյա ժամկետում ընդունում է որոշում նպաստ նշանակելու կամ նպաստի նշանակումը մերժելու մասին:

Նպաստի նշանակման դեպքում դիմողը պատշաճ գրավոր ձեռով տեղեկացվում է նպաստի վճարման ժամկետների, վճարող կազմակերպության եւ վճարման կարգի մասին, իսկ մերժման դեպքում՝ մերժման պատճառների մասին:

Եթե նպաստի նշանակումը մերժվում է դիմումում եւ (կամ) կից փաստաթղթերում առկա թերությունների պատճառով, ապա դիմողին տրվում է նպաստի գործում առկա թերությունները վերացնելու եւ այն կրկին ներկայացնելու համար ողջամիտ ժամկետ, որի տեւողությունը սահմանմում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Նպաստի մերժման մասին որոշումը կարող է բողոքարկվել վարչական եւ դատական կարգով:

5. Պետական նպաստների չափերը, դրանց նշանակման եւ վճարման կարգերը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

6. Սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը, քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների գործունեության մեթոդական ղեկավարում ու վերահսկողություն իրականացնող մարմնի հետ համատեղ սահմանած կարգով, քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններից ստանում է պետական նպաստ նշանակելու (ընտանիքի սոցիալական գնահատման) համար անհրաժեշտ՝ Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական կացության ակտի պետական գրանցման վերաբերյալ տեղեկություններ»:

Հոդված 2. Օրենքի 23.1-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետից հանել «Հայաստանի Հանրապետության բնակության վայրի հասցեով հաշվառված» բառակապակցությունը:

Հոդված 3. Օրենքի 23.2-րդ հոդվածի 2-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 4. Օրենքի 23.2-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

3. Չաշխատող անձին մայրության նպաստ նշանակելու համար հիմք են հանդիսանում՝

1) «Քաղաքացիական կացության ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան տրված երեխայի ծննդյան վկայականը:

2) Վաղաժամ ծննդաբերության, այդ թվում երեխայի մահացած ծնվելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան բժշկական հաստատության կամ բժշկի կողմից տրված սահմանված ձեռի փաստաթուղթը, իսկ օտարերկրյա պետությունում վաղաժամ ծննդաբերության, այդ թվում երեխայի մահացած ծնվելու դեպքում՝ այդ պետության համապատասխան բժշկական հաստատության կողմից տրված եւ տվյալ պետությունում, կամ տվյալ պետությանը սպասարկող այլ պետությունում (հյուպատոսական տարածաշրջանում) գործող Հայաստանի Հանրապետության հյուպատոսական հիմնարկի կողմից վավերացված փաստաթուղթը:

Եթե չաշխատող կինը ծննդաբերում է (այդ թվում վաղաժամ) Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների մեջ չգտնվող օտարերկրյա պետության տարածքում, ապա այդ պետության բժշկական հաստատության տված ծննդաբերության (վաղաժամ ծննդաբերության) վերաբերյալ փաստաթուղթը կարող է Հայաստանի Հանրապետությունում համապատասխան պետական գրանցման եւ մայրության նպաստի նշանակման հիմք հանդիսանալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության եւ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից վավերացվելուց (ապոստիլ դրվելուց) հետո:

Չաշխատող անձին մայրության նպաստ նշանակելու դիմումի բովանդակությունը եւ դիմումին կից այլ անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 5. 23.1. հոդվածի 5-րդ մասից հանել «հաշվառված է Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով» բառակապակցությունը, փոխարենը ավելացնել՝ «բնակվել է Հայաստանի Հանրապետությունում, եւ եթե համապատասխան օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության քաղաքացին օժտված է նույնպիսի իրավունքով»:

Հոդված 6. Օրենքի 23.2.-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետեւյալ բովանդակությամբ.

«Մայրության Նպաստ ստանալու իրավունքը դադարում է, եթե սույն օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանված ժամկետում ու կարգով պատշաճ տեղեկացված նպաստառուն համապատասխան բանկին չի ներկայացնում միանվագ դրամական վճարների հաշվի պայմանագրի հիման վրա բացված իր բանկային հաշվին մուտքագրված նպաստի գումարը դուրս գրելու կարգադրություն»:

Հոդված 7. Օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասի՝ «12 ամսվա ընթացքում» բառերից հետո ավելացնել՝ «սույն օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն տեղեկացված» բառակապակցությունը:

Հոդված 8. Օրենքի 24-րդ հոդվածի 9-րդ մասի 2-րդ կետը շարադրել հետեւյալ բովանդակությամբ. «եթե սույն օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասում սահմանված ժամկետում ու կարգով պատշաճ տեղեկացված նպաստառուն համապատասխան բանկին չի ներկայացնում միանվագ դրամական վճարների հաշվի պայմանագրի հիման վրա բացված իր բանկային հաշվին մուտքագրված նպաստի գումարը դուրս գրելու կարգադրություն»:

Հոդված 9. Օրենքի 28.1 հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 10. Սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել «Չաշխատող անձին մայրության նպաստ նշանակելու եւ վճարելու կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 8-ի N1179-Ն որոշումը:

Հոդված 11. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվա տասներորդ օրը:

Հիմնավորում

Մայրության նպաստը պետական նպաստների համակարգ է մուտք գործել 2013 թվականի դեկտեմբերի 12-ին ընդունված եւ 2014 թվականի հունվարի 1-ին ուժի մեջ մտած «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքում (այսուհետ՝ Օրենք) 2014 թվականի դեկտեմբերի 1-ին կատարված լրացմամբ: Նորամուծությունը ներկայացվեց որպես ՀՀ Սահմանադրությամբ եւ Օրենքով ամրագրված ծնելիության ու բազմազավակության խթանմանը եւ ժողովրդագրական վիճակի բարելավմանն ուղղված պետական միջոցառում:

Ընդհանուր առմամբ մայրության նպաստի սահմանումը վերոնշյալ պետական ծրագրերի իրագործման տեսանկյունից կարելի է դրական քայլ համարել, մանավանդ, եթե նկատի ունենանք, որ պետական նպաստի տվյալ տեսակից օգտվելու հնարավորություն ընձեռվեց նաեւ չաշխատող կանանց:

Այդուհանդերձ, իրականում արվածն ընդամենը կես քայլ էր, քանի որ Օրենքում, եւ հատկապես դրա՝ չաշխատող կանանց վերաբերյալ դրույթներում առկա են որոշ էական բացթողումներ եւ դիտարկվող նպաստի իրավունք ունեցող անձանց շրջանակը անտրամաբանական ու անարդարացի սահմանափակող պայմաններ, որոնք ստվերում են պետական նպաստի այս տեսակի նպատակային նշանակությունը: Այսպես՝

1. Օրենքի 23.1-րդ եւ 23.2-րդ հոդվածներով, ինչպես նաեւ ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 8-ի N1179-Ն որոշմամբ հաստատված՝ «Չաշխատող անձին մայրության նպաստ նշանակելու եւ վճարելու կարգ»-ով (այսուհետ՝ «Կարգ») չաշխատող անձանց մայրության նպաստի իրավունքը պայմանավորող տարաբնույթ պարտադիր հիմքերի շարքում նախատեսում են նաեւ նրանց Հայաստանի Հանրապետության որեւէ բնակավայրի հասցեով հաշվառված լինելը, Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով բժշկական հաստատության տված ժամանակավոր անաշխատունակության թերթիկ, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ծննդօգնության պետական հավաստագիր ունենալը:

Ընդ որում, Օրենքի 23.2-րդ հոդվածի 3-րդ կետում իմպերատիվ կարգով ամրագրված է, որ երեխայի ծննդյան օրվա դրությամբ ծննդօգնության պետական հավաստագիրը չստացած կնոջը մայրության նպաստ չի նշանակվում: Ճիշտ է, նույն կետով Կառավարությանը վերապահված է տվյալ դրույթից բացառություններ սահմանելու իրավունք, սակայն ՀՀ կառավարությունը բավարարվել է ընդամենը մեկ աննշան բացառությամբ՝ եթե հղի կինը նախածննդյան հսկողության վաղ հաշվառման է կանգնել մինչեւ հղիության 12 շաբաթական ժամկետը, (տես՝ «Կարգ»-ի 8-րդ կետը):

Վեր թվարկված պայմանների ուժով մայրության նպաստ ստանալ չեն կարող այն չաշխատող կանայք, որոնք՝

ա) մշտապես կամ Օրենքով սահմանված որոշակի տեւողությամբ փաստացի, սակայն առանց հաշվառման բնակվում են Հայաստանի Հանրապետության որեւէ բնակավայրի հասցեում.

բ) հեռավոր գյուղական բնակավայրերում բնակվելու հետ կապված դժվարությունների, որոշ նահապետական ավանդույթների, անիրազեկության կամ տարաբնույթ այլ հանգամանքների բերումով չեն հաճախել համապատասխան բժշկական հաստատություններ եւ չեն ստացել ծննդօգնության հավաստագիր.

գ) հղիության ու ծննդաբերության ժամանակաշրջանում գտնվել են արտասահմանում (անգամ եթե Հայաստանից նրանց բացակայությունը եղել է իրավաչափ կամ ունեցել է այլ հարգելի պատճառներ), որի հետեւանքով չեն ստացել ծննդօգնության հավաստագիր:

Գործող իրավակարգավորումից հետեւում է, որ, կարծես թե, չաշխատող անձանց համար նախատեսված մայրության նպաստի բուն նպատակն է խթանել ոչ թե ծնելիությունն ու բազմազավակությունը, այլ որոշակի փաստաթղթեր ստանալն ու ներկայացնելը: Հավուր պատշաճի կարեւորելով Հղիության ու ծննդաբերության անվտանգության ապահովման եւ առողջ

երեխայի լույս աշխարհ գալու գործում կնոջ առողջապահության կենտրոններ կամ կանանց կոնսուլտացիաներ հաճախելու եւ անվճար բուժօգնություն ստանալու նշանակությունը, այնուհանդերձ գտնում ենք, որ այդ գործառույթը պետք է ապահովվի բացառապես բացատրական-քարոզչական միջոցառումներով, այլ ոչ թե նյութական սանկցիայի (մայրության նպաստից զրկելու) սպառնալիքով: Մայրության նպաստի նախատեսումը Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում ամրագրված ժողովրդագրական իրավիճակի բարելավման նպատակից բխեցնելու պարագայում գլխավոր իրավաբանական փաստ պետք է դիտվի երեխայի ծնունդը եւ կնոջ մայրանալը:

Հետեւաբար, մայրության նպաստի նշանակման համար վճռորոշ հիմք պետք է լինի «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին» ՀՀ օրենքին համապատասխան տրված երեխայի ծննդյան վկայականը, իսկ երեխայի վաղաժամ (այդ թվում մահացած) ծնվելու դեպքում՝ համապատասխան տեղեկանքը: Եթե ՀՀ քաղաքացին ծննդաբերում է արտասահմանում գտնված ժամանակ, ապա երեխայի ծննդյան վերաբերյալ հիշյալ փաստաթղթերը, համաձայն «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի ա) եւ դ) կետերի, տալիս է Հայաստանի Հանրապետության՝ տվյալ արտասահմանյան պետությունում գործող կամ մեկ այլ պետությունում Հայաստանի Հանրապետությանը սպասարկող հյուպատոսական հիմնարկը:

Փոքր ինչ բարդ է խնդիրն այն դեպքում, երբ ՀՀ քաղաքացին ծննդաբերում է Հայաստանի Հանրապետության հետ դիվանագիտական հարաբերությունների մեջ չգտնվող երկրում: Նման դեպքերում օտարերկրյա պետության բժշկական հաստատության (որտեղ ծննդաբերել է ՀՀ քաղաքացի կինը) կողմից տրված տեղեկանքը, կարող է մայրության նպաստի նշանակման հիմք ծառայել՝ դրա հավաստիությունը Հայաստանի Հանրապետության համապատասխան պետական մարմինների (Արտաքին գործերի նախարարության, Արդարադատության նախարարության, Ազգային անվտանգության ծառայության, Սփյուռքի նախարարության եւ այլն) կողմից հանգամանալի ստուգվելուց եւ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վավերացվելուց (ապոստիլ դրվելուց) հետո:

Վերը նշված տրամաբանությամբ ճիշտ չպետք է համարել նաեւ չաշխատող կանանց մայրության նպաստի նշանակումը անվերապահորեն նրանց՝ ՀՀ որեւէ բնակավայրի հասցեում հաշվառված լինելու հանգամանքով պայմանավորելը: Այս պայմանը, թերեւս, կիրառելի կարող է լինել միայն այն կատեգորիայի անձանց նկատմամբ, որոնց հաշվառված լինելը օրենքով պարտադիր է: Մնացած դեպքերում նպաստի նշանակման համար հիմք կարող է ծառայել նաեւ անձի փաստացի բնակության հասցեն, ուստի եթե անձը հաշվառում չունի, ապա կարող է ներկայացնել տեղեկանք իր փաստացի բնակության վայրից:

2. Լիովին արդարացված համարելով ինչպես մայրության նպաստի, այնպես էլ երեխայի ծննդյան միանվագ նպաստի իրավունքի դադարեցումն այն դեպքերում, երբ նպաստառուն սահմանված ժամկետում համապատասխան բանկին չի ներկայացնում միանվագ դրամական վճարների հաշվի պայմանագրի հիման վրա բացված իր բանկային հաշվին մուտքագրված նպաստի գումարը դուրս գրելու կարգադրություն, գտնում ենք սակայն, որ զանազան թյուրիմացություններից զերծ մնալու համար, այդ պայմանը Օրենքով պետք է ապահովագրվի նպաստը նշանակած տարածքային կենտրոնի կողմից նպաստառուին՝ նպաստի նշանակման, վճարման ժամկետների եւ վճարող բանկի մասին պատշաճ ծանուցվելու (նպաստի նշանակման մասին որոշումն առձեռն հանձնելու կամ պատվիրված փոստով եւ հանձնման- ստացման ծանուցագրով առաքելու) պարտականությամբ:

3. Օրենքում պետք է հստակորեն ամրագրվի իրավասու մարմնի կողմից պետական նպաստի նշանակումը մերժվելու դեպքում՝ մերժման վերաբերյալ որոշումը վարչական եւ դատական կարգով բողոքարկելու նպաստառուի (շահառուի) իրավունքը:

4. Պետական բյուջեի միջոցների խնայողաբար ու նպատակացլաց օգտագործման շահերից, ինչպես նաեւ միջպետական հարաբերություններում հավասարության ու հակակշռելիության սկզբունքներից ելնելով, անհրաժեշտ ենք համարում ղեկավարվել միջազգային իրավունքում տարածում ստացած փոխադարձության կանոնով, եւ ըստ այդմ, մայրության նպաստի

իրավունքով օժտել Հայաստանի Հանրապետությունում գտնվող այն օտարերկրյա քաղաքացիներին, որոնց պետություններում գտնվող ՀՀ քաղաքացիներն օժտված նույնպիսի իրավունքով: